

**ԽՈՇՈՐԱՅՎԱԾ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
**ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՅՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ,**  
**ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ**  
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ**

**II հատոր**

**1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ**

1.Շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների արժեքի խոշորացված ցուցանիշները (ՇԱԽՅ) առաջարկվում են հայաստանի հանրապետության տարածքում կապիտալ շինարարության ծրագրերի, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում շենքերի և կառուցվածքների շինարարության հաշվարկային արժեքի որոշման, ինչպես նաև գոյություն ունեցող կառույցների նախնական գնահատման համար:

**2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

2.Շենքերի և կառուցվածքների շինարարության արժեքի խոշորացված ցուցանիշների սույն ժողովածուն հանդիսանում է 1998թ. թողարկված ժողովածուի լրամշակված տարբերակը:

3.1998թ. թողարկված ժողովածուի 8-րդ կետում բերված է շենքերի և կառուցվածքների արժեքի խոշորացված կառուցվածքը, որտեղ ըստ պատերի և միջնորմերի ծախսերի չափը (47,5%) որոշված է ատաղձագործական շինվածքների (պատուհաններ, դռներ) հաշվառմամբ, որոնց չափը ծախսերի ընդհանուր կառուցվածքի մեջ կազմում է 10%: Արժեքի խոշորացված կառուցվածքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

պատեր և միջնորմեր - 37,5%  
հարդարման աշխատանքներ -27,5%: